ԹԱՆԱՀԱՏԻ ԲԱԶԻԼԻԿԱՆ ԵՎ ՊԱՅՏԱԶԵՎ ԿԱՄԱՐԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՆԴՐԻԱՆՈ ԱԼՊԱԴՈ-ՆՈՎԵԼԼՈ (Միլան)

Ներկա հաղորդման թեման վերաբերում է վաղ քրիստոնեական շրջանի մի քանի հուշարձանների, որոնց ուսումնասիրությունը վերջերս ենք կատարել։ Մեր բաջալերում է հուշարձանների՝ տեղում կատարած բնական ուսումնասիրությունները վաղ քրիստոնեական աշխարհի (III դարի կեսից մինչև VI դար) ու եվրոպական, առանձնապես իտալական վաղ միջնադարի (VI—XI դդ.) հետ բաղդատելու հնարավորությունը։

Առաջին կարևոր ճշտումը կատարվելու է քննության առնված հայկական հուշարձանների թվագրման հարցում։ Ինչպես հայտնի է, այս խնդիրը դեռ լուծված չէ և շարունակում է մտահոգել մասնագետներին, որոնց շրջանում մինչ այժմ տարակարծություններ կան։

Հարկ է նշել, որ այն ուսումնասիրությունների նկատմամբ, որոնք կատարվում են համեմատելով հայկական ու եվրոպական հուշարձանների ձևաբանական կամ ոճա-զարդաքանդակային տարրերը, անհրաժեշտ է ուշադիր լինել թվագրությունների ճշգրտման հարցում։ Սակայն տեղում առաջացած իմ համոզմունքը, որ հաստատվեց իտալացի այլ մասնագետների զուգահեռաբար կատարած ուսումնասիրություններով, ակնհայտ դարձրեց, որ հարկ է մեծագույն լրջությամբ ընդունել պատմա-ժամանակագրական այն եզրակացությունները, որոնց հանգել են սովետահայ մասնագետները վերջին տարիներին կատարած իրենց բազմաթիվ աշխատությունների միջոցով։

Անշուշտ, մեծ դժվարություններով է կատարվում տարբեր մասնագետների ձեռք բերած փորձառությունների փոխանակությունը։ Դժվարություններ է առաջացնում նաև այն հանգամանքը, որ հայկական մի շարք հուշարձանների համար պակասում են պատմա-ժամանակագրական տվյալները։ Կարելի է նույնը ասել անատոլիական և կովկասյան ճարտարապետական այլ օբյեկտների վերաբերյալ։

Նպատակահարմար չենք համարում այս փոքր հոդվածում, թեկուզ համառոտ կերպով, նշել հայ ժողովրդի ստեղծած մշակույթի, պատմության այն գլխավոր իրադարձությունները, որոնք վերաբերում են քրիստոնեության առաջին դարերին և այսպես կոչված «վաղ միջնադարին»։ Այնուամենայնիվ, հարկ է հիշել, որ քրիստոնեությունը առաջին դարերում մուտք գործեց Հայաստան և արագորեն տարածվեց։ Այս իրողության համար որոշ դեր խաղաց սիրիական, հավանաբար նաև սահմանակից կենտրոնական Անատոլիայի և հատկապես Կապադովկիայի միջնորդությունը։

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն դառնալուց հետո սերտորեն կապված մնաց քաղաքական իշխանությանը՝ մերթ փոխարինելով և մերթ գերազանցելով նրան։ Նախ պարսիկներից, ապա արաբներից համառորեն ու հերոսաբար պաշտպանված նոր հավատքը մնաց անկախ՝ Կոստանդ-

Նուպոլսի առաջարկներին և Հռոմի թելադրանքներին չհետևող ինքնուրույն եկեղեցու հիմքում։ Այն նշանաբան դարձավ ոչ միայն ազգային միավորման, այլև էթնիկական խմբի գոյատևման համար։

Քրիստոնեության այդքան վաղ պաշտոնականացման հետևանքներն էին IV—V դդ. բազմաթիվ ու նշանակալից կրոնական շինությունները։

Թանահատի դեռևս քիչ ծանոթ օրինակը ճարտարապետական ցայտուն հատկանիշներ ունի և առիթ է տալիս շատ ընդարձակ խորհրդածությունների, որոնք դուրս են գալիս տեղական սահմաններից և ընդգրկում եվրոպական Միջերկրականի ամբողջ տարածությունը։ Այդ կառույցն առաջացնում է մտքեր, որոնք, ըստ մեր կարծիքի, օգտակար են արևմտյան ու հատկապես իտալական հուշարձանների ուսումնասիրության համար։

Թանահատի բազիլիկան գտնվում է ՀՍՍՀ Սիսիանի շրջանի Արավուս գյուղի մոտակայքում և տեղադրված է երեք կողմից շրջապատող հովտի նըկատմամբ իշխող լեռնաճյուղի վրա։ Այն միանավ, փոքր բազիլիկա է, որի դեպի արևելք ուղղված աբսիդը ներսից պայտաձև է, իսկ արտաքինից՝ պարփակված սիրիական ձևի ուղղանկյուն պատով։ Ծածկը եղել է թաղակապ, առանց հենակամարների։ Այն չի պահպանվել, բայց կանգուն է որոշակիորեն պայտաձև գլխավոր կամարը, որին համապատասխանում է դժվարությամբ իրագործված, բայց կատարյալ հստակությամբ տաշված տուֆի սալերից շարված գմբեթարդը։

Հարավային ճակատի երկայնքով ձգվել է սյունաշարով հինգ հատվածների բաժանված արտաքին սրահ։ Հարավային պատի փլատակներում պահպանվել են խոյակներից մի քանիսը։ Աբսիդին կից սյունասրահն արևելքից վերջանում է մի փոքրիկ սենյակով, որը հավանաբար ավանդատուն էր և կամ որում, ինչպես Զովունիի ս. Վարդան մատուռի նման սենյակում, դրվում էր ննջեցյալի դագաղը։ Նրա արևելյան պատը աբսիդի արտաքին պատի շարունակությունն է։ Ուշագրավ է սենյակի ներքին ծավալի ձևը, կազմված աբսիդի պատի տակից դեպի դուրս բարձրացող թաղով։

Սյունասրահի առկայությունը բազիլիկայի հարավային կողմում (սակավաթիվ օրինակներում՝ հյուսիսային կողմում, ինչպես Դվինում— տես Քոչոյանի վերակազմությունը) կամ երեք ճակատների երկարությամբ՝ հատուկ է եղել սիրիական միջավայրին և ծառայել է որպես հովանի դեռևս եկեղեցի մուտք գործելու իրավունք չստացած հավատացյալների համար։ Հետևաբար պարզ է, թե ինչու մուտքը գտնվում է շենքի հարավային կողմում (Դիրաքլար, Միծեռնավանք)։

Հետաքրքիր է նշել, որ հարավային մասում սյունասրահ և առանց մուտքի գլխավոր ճակատ ունեցող բազիլիկաների տիպը հաճախակի երևույթ է նաև արևմուտքի վաղ միջնադարի ճարտարապետության մեջ, ինչպես և Կարոլինգյան շրջանին պատկանող մի քանի փոքր եկեղեցիների համար։ Վերջիններս տեղադրված են Ալպյան լեռների շրջակայքում։ Այս փաստը, չնայած պատմական տվյալների սակավ լինելուն, մի անգամ ևս հաստատում է Արևելքի և Արևմուտքի մշակութային և ոճական կապերի գոյությունը։

Մեզ ծանոթ տվյալները և տեղանքի առանձնահատկությունները կարող են ենթադրել տալ վանական համակառույցի գոյության մասին, որին մաս էր կազմում Թանահատի բազիլիկան։ Շրջապատում տեսանելի են գերեզմանատան շինվածքներ, ստորգետնյա սրահ։ Բայց այս հարցին պատասխան

է տրվելու այն ժամանակ, երբ տեղում սիստեմատիկ պեղումներ կատարվեն։

Եզակի ու նշանակալից են աբսիդի գլխավոր կամարը կրող խոյակների և կամարի ֆրիզի զարդաքանդակները։ Խոյակների վրա տեսանելի են խիստ ոճավորված բուսական զարդաձևեր, լոտոսի կամ պապիրուսի ծաղիկներ, մինչդեռ աբական զարդարված է եռաթերթ շուշանածաղիկների շարքով։

Այս զարդերի համար դժվար է ոճական համեմատություններ անել, որովհետև թվագրությունը կարող է փոխվել և ենթադրել տալ VII և VIII դարերի գործ։

Բազիլիկան սովորաբար թվագրվում է V—VI դարերով և, ինչպես նշեցինք, այս թվագրումը հիմնված է նմանատիպ կառույցների համեմատությունների վրա։ Պայտաձև վերջավորություն ունեցող գլխավոր կամարի ֆրիզը զարդարված է «փականքի անցք» մոտիվի խոր քանդակված շարվածքով։ Դա հաստատում է դարաշրջանը՝ ամենաշատը մի դար տարբերությամբ։

Պայտաձև վերջավորությամբ ատամնաձև զարդը շատ արխաիկ է և զուտ հայկական (Օձունի բազիլիկա, Մաստարայի եկեղեցի)։ Այն մեծացրած չափերով օգտագործված է Կապադովկիայի վիմափոր եկեղեցիների ճակատներում և ներսի հարդարանքներում (Աչիկ Սերայի, Քառանլիք քիլիսե, առաջինը VIII, մյուսը՝ IX դար)։

Թանահատի ճարտարապետական կառույցի թե՛ ճակատում, թե՛ հատակագծում և թե՛ հարդարանքներում պայտաձևի հանդես գալը դրդում է ուսումնասիրել այս ձևին տրված նախընտրության պատճառը, ծագումը, օգտագործման ժամանակը և մշակութային միջավայրը։

Պարզունակ է այն ենթադրությունը, ըստ որի պայտաձև կամարի գյուտը իսլամական աշխարհին է պատկանում։ XIX դարի կեսերին Տեկսիեն, Պոպլեուլ Պըլլան հերքեցին այդ տեսակետը և ընդհանուր առմամբ պայտաձև կամարը համարեցին «բյուզանդական»։ Նման, բավական ծավալուն և առանձնապես բարդ խնդրի լուծումը չենք կարող մեր հոդվածի սահմաններում սպառել, ուստի ներկայացնում ենք հարցի մի քանի ուշագրավ կողմերը, նրանցից բխող եզրակացությունները և ժամանակագրական կարգով դասավորված տվյալները, որոնք կապված են մշակութային այն միջավայրի հետ, որտեղ օգտագործվել է պայտաձև կամարը։

Մի կողմ թողած Ստրժիգովսկու խեթական որոշ ձևեր, որոնք փոքր-ինչ անորոշ են, հարկ է հիշել էտրուսկյան մի քանի հուշարձան, ուր պայտաձև կամարը կիրառում է գտել, օրինակ, Կիուզիի Գրանդուկայի դամբարանը (IV դար մ. թ. ա.), Արկո դարպասը Վոլտերայում և Ջիովե դարպասը Սանտա Մարիա Ֆալլերիում (III դար մ. թ. ա.)։

Բուն Արևելքի միջավայրում պայտաձև կամարը թեթևակիորեն սրածայր վիճակում օգտագործվել է Հնդկաստանում, հատկապես Կարտիայի վիմափոր ճակատների վրա (Նազիկ, I—II դդ. մ. թ. ա.)։ Շատ հավանական է, որ այդ կամարը կառուցել են բամբուկից և ավելի ուշ փորագրել վիմափոր տաճարներում։

Որպես զարդաձև օգտագործված պայտաձև կամարը առկա է հռոմեական ուշ շրջանի ճարտարապետության մեջ (Ջելիոյի վիլլա Մատեի սարկոֆագը, III կամ IV դար, Մադրիդի հնագիտական թանգարանում գտնվող Լեոնի դամբարանային հուշասյունը, III դար)։ Այն հետևանք է, ինչպես ընդունում է նաև Ռիվոյրան, արևելյան ազդեցության։

Քրիստոնեական ճարտարապետության մեջ պայտաձև կամարը զուգահեռաբար օգտագործվել է Մերձավոր Արևելքի գլխավոր կենտրոններում՝ Սիրիայում, Նիսիբիս մատուռում, Զեբեդ, Բիձնոս և Ռուվեյա կառույցներում, Քալբ-Լուզեի Դամասկոսի ս. Հովհաննեսում (V—VI դդ.), Էզրայի ս. Գևորգում (VI դ.) և թվում է տարածված մոտիվ է եղել, քանի որ առկա է նաև Լաուրենցիանայում գտնվող Զագբայի Ավետարանում (586 թ.)։

Կապադովկիայում պայտաձև կամարը տարածվում է սկսած VIII—IX դարերից և օգտագործվում է թե՛ հատակագծային, թե՛ ճակատային լուծումներում, և թե՛ զարդաքանդակներում։

Վիմափոր օրինակներում ընդունված է տեսնել ճարտարապետական կառուցվածքային ձևեր։ Այս պարագայում կարելի է ենթադրել, որ փորելու տեխնիկան, որն ավելի ազատություն է տալիս, քան կառուցելը, նպաստել է պայտաձևի կիրառմանը։ Այս տեխնիկայով հնարավոր է դառնում առանց ընդհատումների դինամիկ ծավալներ ստանալ, սրել աբսիդների եզրերը և ստվերի ավելի հարուստ խաղերով նրբացնել խորանի եզրագիծը, վերացնել կիսաշրջանագծի չորությունը, և աբսիդները ձուլել պատի մյուս ձևերին։

Կապադովկիայի ամենահին օրինակներին զուգընթաց, նաև ավելի վաղ շրջաններում պայտաձև կամարը յուրահատուկ նախընտրությամբ գործածություն է գտել հարևան Հայաստանում (նաև Վրաստանում)։ Այն խիստ որոշակի դրսևորվել է IV—VII դարերի բազմաթիվ ու բազմապիսի հուշարձանների հատակագծերում և ճակատների վրա։ Բայց նյութի ամբողջական ուսումնասիրությունը հնարավոր չէ ամփոփել մի հոդվածի սահմաններում. հետևաբար պիտի սահմանափակվենք ստորև նշելով գլխավոր հուշարձանների անունները, կառուցման թվագրությունը և նրանցում պայտաձևի կիրառման տեղը.

Վաղարշապատ, Էջմիածին, IV դ. (հատակագծում և ճակատում),
Ապարան, Քասախ, IV—V դդ. (հ. և ճ.),
Զրվեժ, IV—V դդ. (հ.),
Երերուք, IV—V դդ. (ճ.),
Լեռնակերտ (Շիրվանջուկ), V դ. (հ.),
Զովունի, ս. Վարդան մատուռ, V դ. (հ.),
Ագարակ, ս. Մարիամ, V—VI դդ. (հ.),
Թանահատ, V—VI դդ. (հ. և ճ.),
Աշտարակ, Ծիրանավորի բազիլիկա, V—VI դդ. (հ. և ճ.),
Ծիծեռնավանք, V—VI դդ. (հ. և ճ.),
Զովունի, ս. Պողոս և Պետրոս, V—VI դդ. (հ.),
Տեկոր, ս. Սարգիս, V—VI դդ. (ճ.),
Օձուն, VI—VII դդ. (հ.),
Օձունի դամբարանային հուշարձան, VI—VII դդ. (հ.),
Արթիկ, ս. Մարիամ, VI—VII դդ. (ճ.),
Ավան, VI—VII դդ. (ճ.),
Վաղարշապատ, Հռիփսիմե, VII դարի սկիզբ (հ.),
Սիսիան, ս. Հովհաննես, VII դ. (հ.),
Եղվարդ, Զորավար, VII դ. (հ.)։

Մինչդեռ Վրաստանում, ըստ Բալտրուշայտիսի, պայտաձև կամարի գործածությունը ընդհատվում է IX դարում, Հայաստանում, արաբական տիրա-

պետության շրջանի շինարարական դադարից (VIII դ.) հետո, պայտաձևը վերամշակվում է, կրկնվում բաղում անգամ և ավելի մեծ համակառույցներում, որով ակնհայտ է դառնում պայտաձև կամարի ավանդական նշանակությունը և հարազատությունը տեղական մշակույթին։ Ահա օրինակներ.

Սանահին, ս. Փրկիչ, 979 թ. (հ.),

Հաղբատ, ս. Նշան, X դարի վերջ (հ.),

Պտղնի, ս. Մարիամ, XI դ. (հ. և ճ.),

Որոտնավանք, X—XII դդ. (հ.),

Կեչառիս, XI—XIII դդ. (հ. և ճ.)։

Մեր այս հակիրճ ուսումնասիրությունը եզրափակելու համար հարկ է նշել նաև ղպտիների շրջանը։ Եթովպիայում վաղագույն շրջաններից առկա են պայտաձև կամարները. կան դեպի արևելք ուղղված պայտաձև աբսիդով դամբարաններ, իսկ միջնադարում այս ձևը առկա է Լաստայի (Իմր Հաննա Քրիստոս) և Լալիբելայի վիմափոր եկեղեցիներում։ Այս դեպքում ևս ճարտարապետությունը, լինելով վիմափոր, ինչպես նշեցինք Հնդկաստանի և Կապադովկիայի համար, նախընտրություն է տրվել պայտաձև կամարներին։

Իտալիայում պայտաձև կամարի գործածությունը սակավաթիվ է և սկիզբ է առնում V դարից (Ռավեննա, ս. Մարիամի աբսիդ). դա էլ, մեր կարծիքով, հետևանք է Արևելքի ուղղակի կամ միջնորդված ազդեցության։

Ֆրանսիայում մերովինգյան մկրտարաններից հետո չի կարելի չնշել ժերմինի-դե-Պրեի մատուռը, որտեղ տեսանելի են արևելյան ազդեցություններ, միջնորդված Իսպանիայի վեստգոթերի կողմից։ Իսպանիան՝ Միջերկրականի ավազանի հակադիր գլխամասում գտնվող երկիրը, վեստգոթերի շրջանում հատուկ նախընտրություն է ցուցաբերում պայտաձև կամարների ու թաղերի գործածության մեջ։ Այդ տարրերը ցայտուն նմանություն ունեն Կովկասի ճարտարապետության հետ։

V դարին է պատկանում Կաբեցա դել Գրիեկո (Կուենկա) բազիլիկան, որի աբսիդը թե՛ ճակատով, և թե՛ հատակագծով պայտաձև է։

Լիսաբոնի կաթողիկեի աբսիդի հարդարանքը VI դարի է, VII դարին են վերաբերում ս. Ղուան դե Բանոս դե Ջերադո (Պալենցիա) եկեղեցու պայտաձև կամարները, նույն դարին են պատկանում ս. Կոմբա դե Բանդեն (Օրենսե), ս. Պետրո դե լա Նավեն (Զամորա) և ս. Ֆրուկտուոզո դե Մոնտելիոսը Բրագայի մոտակայքում (Պորտուգալիա)։

Մոտիվը, հասկանալի է, փոխանցվելու էր երկիրը նվաճած արաբներին և հաջորդաբար այսպես կոչված մոզարաբական ճարտարապետությանը (IX—X դդ.)։ Սակայն պայտաձև կամարը ձևափոխվում է և արդեն դառնում իսլամական արվեստը բնորոշող արաբական կամար։

Պայտաձև կամարի վերաբերյալ վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս այդ ձևի կարևորությունը ճարտարապետության մեջ և մեծ նշանակությունը որոշ մշակույթների համար։ Այս հարցն ակնհայտորեն առնչվում է Արևելքի և Արևմուտքի, ինչպես և Միջերկրականի գրեթե ամբողջ ավազանի մշակույթների փոխկապակցությունների խնդրին։ Անընդունելի է Մովսիրայի այն միտքը, թե՝ «...վեստգոթերը գալով Դանուբի ափերից, այնտեղ հմտացել էին արևելյան ճարտարապետական արվեստին, և այդ բարբարոսները Իսպանիայում բյուզանդական շինարարական արվեստով եկեղեցիներ կառուցեցին»։

Արփոփելով ասենք, որ եթե ուսումնասիրվի Կենտրոնական Անատոլիայի արվեստը, որը ճարտարապետության պատմության մութ էջերից է, ինչպես նաև Կովկասի որոշ շրջանների արվեստը, կարելի պիտի լինի նոր և հետաքրքիր եզրակացությունների հանգել, որոնք ընդգրկելու են ոչ միայն մասնակի բաժիններ, այլ ավելի լայն առումով՝ Եվրոպայի ճարտարապետության պատմության քրիստոնեության սկզբնական շրջանը և վաղ միջնադարը։

ТАНААТСКАЯ БАЗИЛИКА И ПРОБЛЕМА ПОДКОВООБРАЗНОЙ АРКИ В АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЕ РАННЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ

АНДРИАНО АЛПАГО-НОВЕЛЛО (Милан)

(Резюме)

Архитектура Танаатской базилики (V в.) в Зангезуре дает возможность объяснить некоторые особенности памятников раннего средневековья Запада, особенно итальянских.

Применение подковообразной арки было распространено в древнейшем периоде армянской архитектуры (IV—VII вв.).

Редкие примеры подковообразной арки встречаются в некоторых этрусских мавзолеях и в римской архитектуре позднего периода. Из раннего средневековья имеются примеры в Сирии (V—VI вв.), Малой Азии (VI—VIIвв.) и в Каппадокии (VIII—IX вв.). Подковообразные арки, встречающиеся в средневековой Европе (Италия, Франция), имеют восточное происхождение. В Испанию эту форму привезли вестготы, и она в дальнейшем повлияла на архитектуру завоевавших эту страну арабов. Конструктивную форму подковообразной арки арабы в дальнейшем превратили в декоративную.

Изучение этого архитектурного элемента проливает некоторый свет на проблему взаимосвязей развитых культур Востока и Запада, особенно стран Средиземноморского бассейна.